ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

28.02.2023 թ. կնքված «Պետության կարիքների համար ծառայության մատուցման պետական գնման պայմանագիր ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-23/37-1» պայմանագրի արդյունքի ընդունման գործընթացի հանրային հսկողության մասին

Կազմված և ստորագրված է 2023 թվականի հուլիսի 24-ին, ք. Երևան

Մենք ներքոստորագրյալներս՝

ՀՀ ԿԳՄՍՆ ֆինանսաբյուջետային վարձության փորձագետ Ռազմիկ Օհանյանը (պատասխանատու ստորաբաժանման հայտը նախագծած ներկայացուցիչ) և

«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ աշխատակից Արտակ Հայկազի Թորոսյանը (հանրային հսկողության պահանջ ներկայացրած կազմակերպության լիազորված ֆիզիկական անձ (անձը հաստատող փաստաթուղթ՝ ID 006663470))

կազմեցինք սույն արձանագրություն հետևյալի մասին.

ՀՀ ԿԳՄՍՆ և «Փըրֆեքթ աուդիտ» ՍՊԸ (համապատասխանաբար՝ պատվիրատու և կատարող) միջև 28.02.2023 թ. կնքված «Պետության կարիքների համար ծառայության մատուցման պետական գնման պայմանագիր ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-23/37-1» պայմանագրի (պայմանագիր) շրջանակներում, «Փըրֆեքթ աուդիտ» ՍՊԸ կողմից պատվիրատուին հանձնված ներքին աուդիտի ծառայությունների արդյունքի (փուլային) ընդունման գործընթացին պատասխանատու ստորաբաժանման հետ համատեղ մասնակցության շրջանակներում, Արտակ Հայկազի Թորոսյանը ծանոթացավ պայմանագրի Հավելված 1-ի տեխնիկական առաջադրանքով սահմանված ներքին աուդիտի ծառայությունների շրջանակներում կատարողի կողմից կատարված և պատվիրատուին ներկայացված թվով 12 ներքին աուդիտի աուդիտորական վերջնական հաշվետվություններին, որոնք քննարկվել և հավանություն էին ստացել ՀՀ ԿԳՄՍՆ ներքին աուդիտի կոմիտեի 23.06.2023 թ. և 07.07.2023 թ. նիստերով, ինչպես նաև նախորդող ժամանակաշրջաններում պատվիրատուի մոտ կատարված ներքին աուդիտի աուդիտորական առաջադրանքների հետ կապված վերստուգման գործընթացների փաստաթղթերին:

Սույն արձանագրվում է, որ կատարողի կողմից կատարված և պատվիրատուին հանձնված ներքին աուդիտի ծառայությունների արդյունքի (փուլային) ընդունման գործընթացում պատասխանատու ստորաբաժանման գործողությունները կատարվել են պայմանագրի Հավելված 1-ի տեխնիկական առաջադրանքով սահմանված պահանջների համապատասխան և վերոնշյալ գործընթացների հետ կապված հանրային հսկողության պահանջ ներկայացրած կազմակերպության լիազորված ֆիզիկական անձ Արտակ Հայկազի Թորոսյանը որևէ անհամապատասխանություն չի դիտարկել և չի գրանցել:

Ռազմիկ Օհանյան _____

Արտակ Հայկազի Թորոսյան _____